


1814

X.

3



ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երբ որ տեսնում ենք, ծանրացած թիւրքի անարգ չղթաներով, աշխարհիս մէկ անկիւնում մենակ ու որ- բոցած, հայ ժողովրդային մասան, ընդհանրութիւնը դարերի ընթացքում ողբում, ճնշում, հարստահար- փում, հալածվում. մի բուն ցանկութիւն, մէկ ան- կեղծ միտք ծագում է մեր մէջ այդ ժամանակ- ատաճացնել հայ ժողովրդի փրկութեան խնդիրը, փառ- տաբանել ու պաշտպանել այդ խնդիրը և պատերազմել այդ խնդրի համար:

Ունենալ ազատ խօսք, իբրեւ միջոց ազատարար դիտե- լու ու քննելու թիւրքահայ ժողովրդային ընդհանրու- թեան կեանքի կողմերը, հրապարակ հանելու այն բոլոր թրջ- ուստութիւնները, որ վաղուց դարձել են նրա միակ բաժինը և մատնանիլ անելու այդ ժողովրդի կոչումը, սրտելու այն միջոցներն ու նպատակները, որոնք պիտի տանեն նրան դէպի մէկ ազաւոյ կեանք, դէպի մի կեանք, որ միջոց կունենայ ազատ կերպով զարգանալու և ծաղ- կելու. ահա, ընդհանուր խօսքերով, այս հրատարա- կութեան չարժանիքները:

Իննել միշտ ճշգրտածի կողմը և գէ՛մ ճշողին, արդա- րութեան պաշտպանութեան տակ անցնել, մարանչելով ան- արգարութեան դէ՛մ, ազատութեան անձնու էրև բռնութեան հալածող, լսող խելքի ձայնին և թշնամի նախապաշարմունք- ներին, լինել վարդապետ ժողովրդների կողմը և գէ՛մ փռած կառավարութիւնների, ահա մեր նշանաբանն, ուղղութիւ- նն ու պարտականութիւնը:

Թիւրքահայաստանի հայ ժողովրդի վերաբերութեամբ մենք այն խորին համոզմունքն ունինք, որ պէտք է ան- պատճառ չուտով ջարդելին նրան առաջագիմել արգե- լող ամբապինդ չղթաները և նա ունենայ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՍՈՒԹԻՒՆ, իբրեւ անհրաժեշտ պայման նրա կեանքի ազաւոյութեան և նրա բազմազգիմի զար- գացման համար:

Սակայն ասելով քաղաքական անկախութիւն՝ մենք դա չենք համարում այնպիսի վերջնական կէտ, որը կարող կըլինի բաւարարութիւն տալ նրա կեանքի բոլոր պահանջ-

ներին, որից աւելին իւր ողջ զոյութեան ժամանակ նա էլ պէտք չունենայ: Ոչ. քաղաքական անկախութիւնը հայ ժողովրդի համար պիտի համարուի ըսկ այն ան- հրաժեշտ պայմաններից մէկը, որի իրագործումից յետոյ միայն բացվում է աւաարէջ հայ ժողովր- զի քաղաքական ու ընդհանրական կեանքի մէջ մտցնելու համար մի երև. կան վերանորոգումներ: Կաղաքական անկախութիւնը իրագործումից յետոյ հայ ժողովրդը պէտք է դը մէ գէպի կեանքի այնպիսի կերպերը, որոնց զոյու- թեամբ ամենքը և խրոքանչիւրն ազատ լինի, ու մենքն իրար հաւասար ու եղբայր ճանաչեն, որոնց զոյութեամբ ճշմարիտ ուղի բացուէ և հաստատ հիմք լինի ընդհանրութեան մտաւոր, բարոյական ու աֆիէկտական լիակողմանի զարգացման համար:

Թիւրքահայերի անկախութեան իրագործումը երբէք ըսկ դըրսից չէ կարող լինել՝ այլ ըսկ նըրսից է նա կարող աջողութիւն ունենալ: Եթէ եւրոպական տէրու- թիւնների միջամտութեանը սպասենք և մեր ձեռները ծալենք, հայ ժողովուրդն առաւել անտանկի թշուառու- թիւնների մէջ կխորասուզուէ: Հիշտ է, որ կարող են առաջանալ քաղաքական մեքենաների այնպիսի իրարանջ- րումներ, որ եւրոպական այս կամ այն տէրութեան հա- մար նոյն ժամանակին չահաւտ կլինի բարձրացնել հայկական խնդիրը և նրա բաւարար իրագոր- ծումն ուղղակի կամ անուղղակի կերպով պահանջել. սա կայն այդպիսի առիթները մեղ աւելի կհասկացնեն ինչպէս արգէն եղել է, որ պէտք էր կանխապէս պատրաստ լինէինք՝ դրանից օգտուելու համար: Եւ այդուամենայնիւ աւելացնում ենք, որ այժմեան քաղաքականութիւնը, զիպոմատիան, նմանում է քամու ջրաղացին. այսօր այն կողմն է նա չրժվում, որ կողմ քամին է իր չունչն ուղղում, իսկ վաղը ջրաղացը կարող է նոյն քամու քր մահաճոյքով և հակառակ կողմը պտտուել:

Այդպիսի խարխուլ հողի վրայ մենք չենք կարող դնել այնպիսի սուրբ ու ծանրակշիւ գործի աջողութեան հիմքը, որպիսին ժողովրդական գործն է: Այդ գործին հաղկաւոր է մի հիմք, որ յենուած լինի հաստատ ու ու մեր հողի վրայ. այդպիսի հող նոյն ինքը թիւրքա- հայ ընդհանրութիւնն է, նոյն ինքը թիւրքահայ

ժողովուրդն է: Թիւրք ահա ժողովրդի գրեթե
թեւեռն է ի մի կողմ ահա ծանր աղաքան երուս-
մաւս աւախն շարժումը, բռնի, ոտի աղա-
կան միջոցն երես, ապա ոտամբ աղան, յեղա-
փոխ աղան ապա սնալիքն երբ թիւրք կատա-
վարութեան գէտ, նա առաւել աւարմար են
եւ իման գամայն անհրաժեշտ, եթէ միայն մի-
լիմուտը ժողովրդի մտաւառ կորուստը սարսափ չէ
աղաւմ նոյն իրեն կորչող հայ ընդհանրութեան և գը-
խաւարակէս հայ կրթութեամբ հասկացող դասակարգի
վրաս: Ահա ահա գէտի այդ դասակարգն ենք մենք գիտում
և առաւելակէս գէտի այդ դասակարգի երկուստարու-
թիւնը, լինի նա ուսանայ, թիւրքահայ, պարսկահայ
այլ մէկ է. դրանք ամենքը եզրայր են և մենք դրանց
մէջ ոչ մի գանդակութիւն չենք գիտում ժողովրդական
գործի վերաբերութեամբ. գիտում ենք գէտի այդ դա-
սակարգը, յայտնի է թիւրքահայերի ամենքն աշակեր-
տանք թէ կաղ թէ կոյր և թէ տհաս է իր վրեժ գտար
պաշտպանելու համար. գիտում ենք գէտի նրան, կոչելով
որ իսկ նրա ետանդը, նրա խօսքը, նրա ոյժը կարող են
բարձրացնել թիւրքահայ ընդհանրութեան խեղճութեամբ
ողին և ժողովրդի ամենքի տակ պատրաստել հաստատուն
հայ կարեւոր յեղափոխական գործի աշխատութեան համար: Այդ
պատճառով իւրաքանչիւր մասնու, ազնիւ ու ժողովրդին
սիրող հայի նշանաբանն ու գործունէութիւնը մենք հա-
մարում ենք՝ ժողովրդի մէջ, ժողովրդի հետ
և ժողովրդի համար:

Այդ նշանաբանն ունեցող հայերի օրգանը պէտք է լինի
այն հրատարակութիւնը, որի պարագին է և որոշ
ծրագիրը բացատրելու հաստատել, որ հայ ժողովրդա-
կան գործը լոկ յեղափոխութեամբ է կարող աճող ելք ու-
նենալ, ընտրել գործնական միջոցներ յեղափոխութիւն
անելու համար և որոշել նրա մտաւայն նպատակները:

Ընդհանրապէս հայերիս այժմեան գրութեան մէջ ա-
ղաւ խօսքը մէկ անհրաժեշտութիւն, մի պահանջ է և մի
և նոյն ժամանակ նպատակադրման, միայն թէ այդ
խօսքն ունենայ կենդանութիւն, թարմութիւն ու լրջու-
թիւն: Կանոնադրապէս աղաւ խօսքը մի պահանջ է այն
հայերի համար, որոնց կեանքի նպատակը չէ ամենեւին
բոտականանայ անձնական կամ մի նեղ շրջանի շահերով ու
տարաձոյ կացութեամբ, այլ որոնց սրտերում կայ մէկ


ուրիշ խղճ, մէկ ուրիշ յափնտակութիւն, այն է՝ գործել
ու բանել ժողովրդի մէջ և ժողովրդի համար, տանջուել
ու չարչարուել ժողովրդի տանջանքով ու չարչարանքով և
աղաւ խօսքը չրթներին՝ պահանջել ժողովրդի բարին, բա-
ղաբերել չարի գէտ:

Այն, չարչարութեամբ ու հալածութեամբ զաւակներ չարչա-
րութեամբ ու հալածութեամբ հայերի մենք, հայերս, ծարա-
ւանք աղաւ խօսելու, աղաւ մտածելու, որ գեւ ման-
կութիւնից, յանուն բոնակայի օրէնքին, արդիւն են մեղ,
ալ խառնելով գրեթե մեղ լինաւ բոյնութիւնից և դարձնել
բանաստեղծի ու ճշտելի ուս լրջութեւն: Աճարմատ է
այն հայը, որ հասել է այդ տխուր վիճակին, բայց նրանք,
որոնք այսպէս կամ այնպէս կարողացել են խառնել
այդ թուեաւոր պատուաւորից, նրանք, որոնք զգալով հայ
ժողովրդի ընկճութեամբ գրութիւնը, միանգամայն մտածում
են այդ գրութիւնը յեղաշրջելու անհրաժեշտութեան վրա,
գրանք, իրեն արթն, առաջ տարր հայութեան, թող
բարձրացնեն իրանց ձայնը և խառնեն մերթնի հետ, եթէ
նրանց ուղղութիւնն ու հայեացքները տարբեր չեն մե-
րանցից. այն հրատարակութեան թերթերը բայ են
այդպիսիների համար:

Հայերիս այսօր հարկաւոր են գործի և անկեղծ խօսքի
մարդիկներ և այդպիսիներին առաւելագ հանելու
համար պէտք է նպաստել այն հրատարակութիւնը:

Մենք գիտենք թէ՛ որպիսի մեծ գծաւորութիւններ ու
խղճներ կան և գեւ կտաւանան մեր հանգիստ
այսպիսի հրատարակութեան ձեռք գարնելով. այդ գը-
ռարութիւններից զխառնում այն է, որ աղաւ խօսք ու
նենալու համար մենք սրտաւորութեամբ ենք հետու երկ-
րում ձայն տարու և այդպիսով այս թերթն իր աղաւ
ողու պատճառով ոչ մի բացարձակ մասը չէ կարող ու-
նենալ ոչ ուսանալիքի և ոչ թիւրքահայերի մէջ: Բայց
մեր հայրենակիցների ցանկութեամբ ու ետանդով, լիա-
յայտ ենք, այդ խղճատը կանչեաւանայ, որը և անհրա-
ժեշտ է:

Թող «Հնչուն» անդադար հնչէ և կոչէ՝ եզրայր եզր-
ը ձեռք տայ և թող նրա հնչիւնը թնամու տեանջին հաւ-
նէ և նրան գողացնէ. թող նա հնչէ բոցարձակ ու խառ-
կերպով օտար տեղերից, և թող նա հնչէ, թէպէտ գաղա-
նաբար, բայց միշտ արդար բարբառով, նոյն իսկ հայրենի
երկրում, մինչև որ հայ ժողովրդի վրայ տիրած խաւա-
րը վատ արշաղայսին տեղ կտայ:



ԹԻԻՐԲԱՀԱՅԻ ՆԵՐԿԱՆ

ԵՒ

ԻՆՁ Է ՀԱՐԿԱՆՈՐ ԱՆՆԷ:

Ա

Ծանր ու սոսկալի է, երբ մտածում ես այն քաօսի մասին, ուր քաղցածը հայ չէ ճարում, արդարը պատժվում, անվայել ու անարդար դործը խրախուսվում, ուր զիչեր ու ցերեկ, որպէս մայրն իր որդու գիտի վրայ, մարդ զոգում ու լալիս է իր աղքատիկ կայքի կորստի մասին, ուր թշուառն ու տկարը ծեծվում է պարտաւորութեամբ՝ լղում այն գետինը, որի վրայով անցել է նայն իրեն ծնողը, ուր սալուստ, իրաւունք, բաղտ, հանգիստ, կեանք . . . բոլորը միանգամայն խորտակւած է փոշի մէջ, որ միշտ դո՛ւ է քամիին. այս, ծանր ու սոսկալի է, երբ մտածում ես այդ քաօսի մասին՝ թիւրքահայ ժողովրդը, զայն ընդհանրաթեան ներկայ անասնիկի գրեթեան մասին:

Ամբողջ հինգ դար ենթակայ տմարդի հալածութեան, քայքայումների, անվերջանալի կողոպուտների, ամբողջ հինգ դար կրած ամեն տեսակ ցածրութիւնների, ստորութիւնների, ամենօրեայ աղէտների, որոնք պատմութեան մէջ իսկ ստիպաւ ենք հանդիպում, ամբողջ հինգ դար դարձած ստրուկը, ճորտն արիւնհարբու, ու ժեղ օտար անցորդների, որոնք յետոյ իրար մէջ պատառալատառ էին անում նրան այսօր հայ ժողովուրդը կարծես հնգեկարգի վրայ է:

Մերոսկին խեղդում մէկ անկիւնում, տղամարդին վայրենարար նեղում, ծնում է յետոյ սպանում՝ կամ պարտաւորեցնում կենդանի թաղուել պանդխտութեան թշուառութիւնների մէջ, տանն ու գուրաը կին, աղջիկ ու երեկայ բռնաբարում, խրում խօսք, խրում պէ, զէնք, կողոպտում ամբողջ նահանգներում տուն ու տեղ և անտուն անտեղին յանձնում անմիտ ու անզուրթ ճակատագրի քմահաճոյքին, որի միակ ճանապարհը տանում է դէպի մրտէ:

Բ

Թիւրքական ը է թ ի մը, բէժիմ տմարդութեան ու կողոպուտների, բէժիմ վայրենի բռնութեան ու բարբարոսութիւնների, այնպիսի ահաղին, օրինական տառած, բայց խկապէս անկանոն ու հարստահարիչ հարկեր է ծծում հայ զիւղացոյց, անտես թոգնելով նրա հոգի տալածութիւնն իր պահանջներով և ժամանակի արդիւնութեան որքանութիւնն ու որակութիւնը, որ միանգամայն ոչնչացնում, աղքատացնում է ամենահարուստ զիւղացու զոյութիւնն անգամ: Տասանորդական հարկեր, հարկեր անային կենդանիներից, պատերազմային հարկեր

և այս բոլորը զիւղացու զլխին զիւղում են իրեն խոշոր պարտքեր: Եւ զիւղացին պարտքեր է ունենում ոչ միայն տէրութեանն, այլ և մասնաւոր տղրուկներին, որ պիտիներ են կառավարչական պաշտօնեաներ, վալիապտեաներ, չարչիներ՝ անհրաժեշտ պաշտօններն ու օգտաւոր գաւառարգը թիւրքական բէժիմիս Եւ այդ թիւրք կամ թիւրքացած հայ կառավարչական պաշտօնեաներից, վալիապտեաներից, չարչիներից կաղմուած անզուրթ հարբուտահարիչ գաւառարգը, քմահաճոյքից զոյուած, անգաղար ինքնակամ հարկեր, տուրքեր է բարդում հայ զիւղացու զլխին, այդպիսով ապօրինի կերպով էլ մէկ տաւանձին մեծ հարկաւորով նշանակելով Վիւղացու պարտքերն իր կորստի գուռն են բացում: Արդարեւ, այդ պարտքերի վերայ ընդհանրապէս դեռ չլուած տոկոսիքներ են նշանակվում, բնականաբար, պարտատէրերի կողմից: Օրինակ՝ ենթադրենք որ մէկ զիւղացի մէկին պարտական է քառասուն ֆրանկ, մի տարուց յետ նա պիտի հաստոյանէ իրեն պարտք՝ դու վերայ աւելացնելով և զայն գումարի կէսն, այն է՝ քսան ֆրանկ, իրեն տոկոսիք և քառասուն ֆ., խկական պարտքը, որ ընդամենը կանէ վաթսուն ֆրանկ. միս տարին արդէն վաթսուն ֆրանկի կէսն է համարվում իրեն տոկոսիք, այսինքն՝ երեսուն ֆ. և վաթսուն ֆ., որով ընդամենը կանէ իննսուն ֆ. և այլն . . . այսպէս շարունակ առաջադիւմում է: Բնականաբար, այդպիսի ահաղին տոկոսների առաջադիւմութիւնը տարիներն ընթացքում զիւղացու չնչին պարտքից դարձնում է պատականիկի գումար, որի վճարումը զիւղացու համար անկարելի է դառնում և մասնաւոր գուտ գրամով Եւ ինչ են անում այդ պարտքերը Այդ պարտքերը զիւղացուն իր անձով դարձնում են սպանիքը, զործիքը, ճորտն իր պարտաւորալը, որն իր ցանկացած ժամանակին իրաւունք ունէ խլել զիւղացու տունը, տեղը, բոլոր կայքը և մինչև իսկ նրան էլ բանաւ նստեցնել:

Տէրութիւնն իր սովորական վայրենի անգուալ բռնութեամբ արդէն ծծում է հայ ժողովրդի արխնը և նրա մնացած սովոր արխնն էլ իր տղրուկ-օգնական պաշտօնեաներին, վալիապտեաներին էլ թոյլ տալիս և մինչ իսկ խրախուսում ծծելու և այդ ամենը կառավարութեան սխառէմի է վերածել: Մինչ դեռ զայն արխնաբամ ժողովուրդը նայն տղրուկ տէրութեան ու նրա օգնականների նիւթական հարստութեան մեծ մասի արտադրողն է:

Գեա առաջանանք, առաջանանք այդ զժրաղէ միջնորդ տի մէջ . . .

Ահա կանոնաւոր կաղմակերպութեան բացակայութիւնից առաջացած առեւտրական մշտական ճգնաժամ: Երկրի բնական բաղմատեսակ հարստութիւնների՝ հանքերի զորդութեան արգելում, անձնաւորութիւնն արհամարհուած և զուրկ քաղաքական, անտեսական և ստէպ աղգային իրաւունքներից, ամեն տեսակ բարբարոսութիւններից,

օտար վայրենի ցեղերի յարձակումներից և դրանց դառն աղետ հետևանքներից ժողովրդի անապահովութիւն. ժողովրդի յուսահատութիւնն իր գրութիւնից և պանդխտութեան թշուառութիւններին յանձնուին. այդ ամենից մարդ սարսուռւմ է և դրանց հետևանքները սարսափելի են: Այդ բոլոր մեր ասածներն այն թշուառութեան հօրիւղօնն է, որ կոչւում է Թիւրքա-Հայաստանի հայ ժողովրդի, հայ ընդհանրութեան ներկայ:

Գ.

Վերջապէս ե՞րբ կլինի այդ ներկայի վախճանը:

Վերջին տասնեակ տարիներին ընթացքում քիչերի սրտից չէ անկեղծ կերպով դուրս պրծել զայլոյթի այդ զօշիւնը, բայց ինչպէս անապատում ելած՝ այդ զօշիւնը ոչ ոքի սիրտը չէ շարժում և կրկին մեռնում է երկարատև ժամանակով: Եւ ո՞ր փնտուել հպարտութեան ու վիրաւորուած ազնիւ անձնասիրութեան յանդուգն ոգին, որ ոյժ ու համարձակութիւն է տալիս մարդու: Եւ ո՞ր փնտուել անկեղծ յափշտակութիւն, գիտակցութիւն սեպ հակառակ արժանաւորութեան, արձագանքը բացարձակ, յանդուգն ու արդարապահանջ զօշիւնների . . . Միթէ հայերի մէջ այդ ամենը բացակայ են . . . Երեւի, որովհետև հակառակ դէպքում այդ յատկութիւնների պտուղները մենք կունենայինք: Տեսէք. Կ. Պօլիսը դարձած է հայ ինտրիգան երկրի ասպարէզ, այն Պօլիսը, որ մինչև այսօր արդէն պէտք էր հայաստանցու վիճակը լաւ դիտնար և նրա համար մի ճարտար լինէր: Կովկասը հայաստանցու գրութեան վերաբերութեամբ հանդիսանում է անտարբերների կամ պէտք ապէս լայողների բընակավայր. . . : Եւ չորս կողմ կարծես բոլոր ազգայինը կամացկամաց փառում է, չորս կողմ ճահճային անչարժութիւն ու բաւականութիւն քիչով, չորս կողմ միտեսակ անհոգութիւն և այսպէս ասած, լայն մոռածման բայցակայութիւն . . . Ինչո՞ւ: Արդեօք հայաստանցին ձեռ հարազատ չէ՞ և կամ սպասում էր, որ երկնային մանանայի նման, նրա զլխին ինքն ըստ ինքեան թափուէ երջանկութիւն, հանդիսա ու բարեկեցութիւն . . .

Բայց անտարբերներին, կասկածառներին ու սեփական հանգիստ սիրողներին, թէկուզ դրանց դիրքերը նշանաւոր էլ լինեն ազգիս մէջ, թողնենք անոյշ կերպով ննջեն կամ իրենց մեծանուն գահերի վերայ և կամ իրենց տար վերմակների տակ: Դրանց չէ, որ մենք դիմում ենք հայ ժողովրդի անունով և դրանցից չենք սպասում մէկ արդիւնաւոր գործունէութիւն ժողովրդական գործի վերաբերութեամբ: Մենք դիմում ենք դէպի այն փոքրամասնութիւնը, որը կայ՝ ապահով ենք, որ ոչ միայն անկեղծ սրտով տողորվում է թիւրքահայ ժողովրդի թըշուառ գրութիւնը տեսնելով, այլ և միաժամանակ ուզում է իր բոլոր ոյժերը գործադրել այդ վիճակը թեթևացնելու համար: Մենք դիմում ենք դէպի նրանց, որոնց սըր-

տերի խորերից, որպէս հիւանդի ցաւոտ տնքոց, դուրս է ելնում այս դոշիւնը թէ՛ վերջապէս ե՞րբ կլինի այդ ներկայի վախճանը:

Դ.

Դառնանք ուղղակի խնդրին:

Ամենքին յայտնի է, որ թիւրքահայաստանցու գրութիւնը ողբալի է և բիւր անգամ ասուած ու գրուած է, որ անհրաժեշտ է փոխել այդ վիճակը: Լաւ, բայց այդ բաւական չէ, և դրանից յետ ուղղակի զալիսէ մի հարց, որից չատերն են խուսափում: Այդ հարցը հետեւեալն է. ի՞նչպէս փոխել այդ գրութիւնը: Արդարեւ, որպիսի՞ միջոց ընտրել դրա համար: Թիւրքական ներկայ դէպքում տակաւն բէթիմի գոյութեամբ արդեօք կարելի է ընտրել դրա համար այնպիսի միջոց, որ բուն թիւրքա-Հայաստանի հողի վերայ այսօր գործադրուէ օրինական քայլերով: Եւ կայ արդեօք այդպիսի օրինական միջոց, որ օրինական լինելով հանդերձ՝ լինի միաժամանակ և նպատակայարմար. այսինքն կարողանայ թիւրքա-Հայաստանցու կեանքն ամեն չարիքներից ապահովացնել, առանց ինչի ժողովրդի որ և է առաջադիմութիւնն անկարելի է: Եւ ենթադրենք գտնուեցաւ այդպիսի օրինական միջոց, որն անշուշտ ահագին տասնեակ տարիների, եթէ չատենք մէկ երկու դարու ընթացքում միայն կարող կըլ լինի ժողովրդի կեանքի կերպերը յարմարեցնել այնպէս, որ առաջադիմութիւնը քիչ կարելի լինի, բայց արդեօք այդ անսահման ժամանակը վաղ թէ ոչ մեզ չի՞ սպառնայ որ և է պատահական կատակ լինի ընդհով առաւել ևս վատթարացնել հայ ժողովրդի գրութիւնը, եթէ չանենք՝ իսպառ ջնջել ժողովրդի գոյութիւնը:

Այժման ժամանակը և իրերի ներկայ բնական ընթացքը թիւրքա-Հայաստանում մեզ ստիպում են սալազայ դադրելի մէջ չզգնել հայաստանցու բարեխառութեան խնդիրը և անմիտ, ոչ մի հիմք չունեցող յայտերի վերայ չվստահանալ և ժամանակին յանձնել այդ գորղեան հանդուցիլ լուծումը: Եւ մեր բոլոր յայտերը, մեր բոլոր երազները, որ ժամանակն ու երազական քաղաքական հանգամանքները և կամ որ և է գծուծ ու խիստ նեղ խիստ սահմանափակ օրինական միջոցը հեռաւոր ապագայում կկերպարանափոխէ հայաստանցու ներկան գրոյից հեռու չեն գնում, որովհետև մենք նմանապէս սպահով չենք, որ մեր այդ բոլոր յայտերը լիովին խաբուսիկ չեն և նոյն իսկ ժամանակն ու ապագայ քաղաքական հանգամանքները հայաստանցուն առաւել դառն ու տխուր գրութեան չեն հասցնիլ:

Իրերի այդպիսի վիճակում, երբ համբերել էլ անկարելի է, երբ փոխարէն վերայական յայտերի, երազների կամ խիստ նեղ, բայց նոյնպէս երեւակայական ու անիրազուրկ ծելի օրինական միջոցի՝ սրահանջվում են դրական մըտքեր ու նախագծեր, դրական ու արմատական միջոցներ,

գործունէութեան զրական ծրագիր՝ հետեւարար ինչո՞ւմ մինք գտնենք հաստատ հիմք մեր գործունէութեան համար, որի միակ նպատակը պէտք է լինի փրկել հայաստանցուն իր թշուառ ու կորստաբեր ներկայից:

Մենք պէտք է դիմենք դրա համար այնպիսի միջոցի, որ ժամանակի ու եւրոպական քաղաքականութեան հետ ուղղակի կապ չունենայ, ուղղակի կախում չունենայ նրա նից, այլ մինչև իսկ ստեղծող լինի Ներդրում այնպիսի քաղաքականութիւն մեր վերաբերութեամբ, որ նպատաւոր լինի մեր նպատակի իրագործմանը: Պէտք է դիմենք այնպիսի միջոցի, որի նպատակայարմարութեան ու աջակցութեան վրայ մենք լիապէս վստահ լինենք. այնպիսի միջոցի, որի սահմանների ընդարձակութիւնն ու լայնութիւնը ոչ թէ թիւրքական ընդհանրութեամբ, այլ մեր սեփական ընդունալութեամբ, աշխատասիրութեամբ, ջանքով ու եռանդով լինի պայմանաւորուած և որը, հետեւապէս, կարող է շատ ստէպ, գրեթէ միշտ, օրինական շրջանից դուրս գալ և դառնալ անօրինական:

Ե

Ի՞նչ է հարկաւոր հիմա անել:

Մեզ հարկաւոր են բռնի, ստիպողական միջոցներ, ուրոնք սպառնալիք կ'լինեն թիւրք կառավարութեան գէժ, որոնք ներկայումս մեզնից պահանջելով զոհողութիւններ, ապագայում խոստանում են ժողովրդական իշտոի աջութիւնը: Մենք պէտք է ոյժով ու քաջութեամբ յետ խլենք այն, ինչ որ դարեր առաջ ոյժով ու քաջութեամբ խլել են մեզնից. մեր ինքնուրոյնութիւնը: Գրա համար մենք պէտք է բարձրացնենք թիւրքահայ մասսայի ընկճուած ողին, բացենք նրա աչքերը, ցոյց տանք նրան ճանբայ և լինենք նրա ուղեկիցը յեղափոխական, ապստամբական շարժումներում, յանուն ժողովրդի կեանքի ապագայ ապահովութեան ու ինքնուրոյնութեան, առանց ինչի ներկայումս անհնարին ու ցնորական է մտածել ժողովրդի որ և է առաջադիմութեան վրայ: Եթէ անընդունակ եղանք այդ անելու, այն ժամանակ արդէն անարժան ենք ինքնուրոյնութեան, որն ուրիշ կերպ չենք էլ կարող ունենալ:

Լոկ դա կ'լինի պտղաբեր ուղղութիւն մեր գործունէութեան մէջ:

Թիւրքիան առանց ստիպման, մինչև որ բռնի միջոցներով պարտաւորուած չլինի, երբէք խաղաղութեամբ չի համաձայնիլ հէնց նոյն իսկ փոքր լինչ թեթեալները մէկ ազգի գրութիւնը, որին խիստ ճնշելով կարողանում է օգուտ քաղել նրա աշխատասիրութիւնից, ընդունակութիւնից և հետեւաբար՝ որին իր ձեռից բաց թողնելը կը լինի կրկնակի մեծ կորուստ իրեն համար. նախ՝ նա կը զրկուէ երեք միլիոնից բազկացած մէկ ազգի վրայ տիրապետելուց և երկրորդ՝ իր հարստութեան համար մի զգալի ու նախանձնի գուռ կ'ծածկէ: Թիւրքիայի չահե

րը ստիպում են հային ճնշուած, ստրուկ պահել և ամենեւին առանց հիմքի չեն այն խուզարկութիւնները, ձերբակալութիւններն, արքորանքները, որ նա անում է հայերի վերաբերութեամբ: Իր ձեռից կորցրած Յունաստանի, Սէրբիայի, Գարսիաղի, Բալքարիայի ազատուած ստուէրները դողացնում են նրան և մօտիկ հօրիզոնի վրայ տեսնելով իր անխուսափելի քայքայումը և միևնոյն ժամանակ զգալով որ հայերն արթնանալու վրայ են, այդ «հիւանդ մարդն» իր բոլոր միջնաձկտական ոյժերով ճըզնում է արգելքներ ստեղծել դրա առջև: Նա գիտէ, որ կորցնելով Հայաստանի հողն՝ անխուսափելի է այն հանգամանքը, որ նոյն ինքը կդառնայ եւրոպական ազաճ տէրութիւնների զոհը: Նա հոգեվարքի մէջ է. նա իր գոյութեան համար յուսահատ պատերազմի մէջ է մտնում և քանի որ ինքն ուզում է ապահով լինել Հայաստանի հողն իր ձեռին կապէ, ամրապինդ փակելով այդ երկրի արևելեան դռները, որ այդ կողմից ո՛չ մի եւրոպական սուր իր աչքը չչլացնէ և տառապող հարստահարուած հայ ժողովրդի ձայնն այնտեղից դուրս չերթայ, և այդ պիտով ինքն առաւել կարողանայ այդ թշուառ ժողովրդին ճնշել խեղդել և հայրենիքը դարձնել նրա համար մէկ աղէտալի դժոխք

Տաան և իններորդ դարու պատմութիւնը մեզ համար պիտի մի կրթիչ օրինակ լինի:

Մնցեալ դարու վերջերը ծագեցաւ ազգայնութեան խնդիրը և արդէն այս դարու հէնց սկզբները մենք տեսնում ենք, որ ճնշուած ազգութիւններն ուժգին դրդողով կոտորաւում են ստրկական շղթաները և ձգտում ձեռք բերելու իրենց ազատութիւնն, իրենց անկախութեան, ինքնավարութեան համար գէնք ձեռին պատերազմում են ճնշող ազգերի գէժ: Նրանք իրենց նեղ ու աննախանձ ձեյի գրութեան արմատական կերպարանափոխութեան անհրաժեշտութիւնը տեսնելով, լիովին տրամաբանօրէն դիմեցին բռնի, ստիպողական, սպառնական միջոցների իրենց տիրապետող բռնաւոր կառավարութիւնների գէժ և այդպիսով նրանք իրենց ազգային խնդիրն իր ժամանակին դարձրին եւրոպական քաղաքականութեան մէջ այրող խնդիր և վերջապէս աջողեցան հասնել իրենց նպատակին: Եւ չկայ օրինակ, որ մէկ ազգ, մի ժողովուրդ կարող եղած լինի ազատուել օտար բռնաւոր լծից առանց բռնի, յեղափոխական միջոցների և առանց մեծաւմեծ զոհողութիւնների, առանց արիւնհեղուքեան: Այդպէս են եղել իտալացիները և առաջ նոյն տէրութեան լծի տակ ընկած, որ և մենք և մեզ պէս գրութիւն ու նեցող յոյները, սէրբերը, գարադաղցիները, բալքարները, որոնք կարճ ժամանակի միջոցում յեղափոխական, ապստամբական շարժումներով հասան առաւել կամ պակաս ինքնավարութեան, առաւել կամ պակաս անկախութեան:

Այդ պատմական իրողութիւններն արդարացնում են այն խօսքը թէ՛ նա, ով չէ կարող պատերազմով ձեռք

րերել ազատութիւն, նա անարժան է դրան:

Այդ օրինակները թող մեզ համար և դաս լինին և քաջալեր:

„Ազատութիւնը չէ տրվում, այլ առնվում է,“ ասում է ան արխիստ Կրօպոտկինը:

Այդ պատմական ճշմարտութիւնը մենք, հայերս, միշտ աչքի առջև պէտք է ունենանք:

„Պատրանստ լինենք՝ ժամանակը մօտ է:“

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԸ

Ույն հրատարակութեան մէջ ղեկավարել յօդուածներ ընթացիկ անցքերի մասին, որոնք առաջանում են զլխաւորապէս թիւրքահայերի, նոյնպէս ռուսահայերի ու պարսկահայերի կեանքում, այնպիսի անցքերի մասին, որոնք անմիջական կապ ունին ժողովրդի քաղաքական ու սօցիալ-տնտեսական դրութեան հետ՝ կլինի մեր պարտաւորութիւնը: Լուսարմենի այդ անցքերի օգտաւէտ կամ վնասակար կողմերն ընդհանրապէս աղղիս, բայց զլխաւորապէս ժողովրդային ընդհանրութեան վերաբերութեամբ՝ կլինի մեր աշխատանքը: Եթէ առանձին մարդու արարքներն ու գործերը յայտնվում են իբրեւ ուղիղ ու հաւատարիմ արտայայտութիւն նրա էութեան, նմանապէս այն անցքերն էլ որոնք առաջանում են յայտնի ժողովրդի մէջ, յայտնվում են իբրեւ ուղիղ ու հաւատարիմ արտայայտութիւն դոյն ժողովրդի էութեան: Մէկ անգամից նայելով, պատմութիւնն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ այս կամ այն ժողովրդի մէջ եղած աչքի ընկնող անցքերի, փաստերի ժողովածու: Պատմութիւնից մենք ճանաչում ենք և տալիս գնահատութիւն այս կամ այն ժողովրդին, որովհետեւ ենք այս կամ այն ժողովրդի նշանակութիւնն ու տեղը մարդկութեան քաղաքակրթութեան ու զարգացման մէջ: Եւ դրա մէջն է ահա պատմութեան զըլխաւոր իմաստներից մէկը: Այն նշանաւոր անցքերը, որ հէնց մեր կենդանութեան ժամանակ առաջանում են յայտնի ժողովրդի կեանքում, դառնում են պատմութեան սեփականութիւն, որը և կղիտէ ու կընէ նրանց ապաւայում: Այսպէս մի ժողովրդի կեանքի զլխաւոր իմաստը մենք տեսնում ենք աչքի ընկնող այն անցքերում, այն փաստերում, որ առաջանում են նոյն այդ կեանքում, այն հարցերում, որոնց յարուցանում է նոյն այդ կեանքը: Մեր այս յօդուածներում ահա հէնց դոյն իմաստը մենք կաշխատենք նկատել ու լուսաբանել ընդհանրապէս հայաց կեանքի, բայց զլխաւորապէս թիւրքահայ ժողովրդի կեանքի վերաբերութեամբ:

Այստեղ մենք չենք կարող հիմա լռել այն նշանաւոր անցքերի մասին, որոնք հայոց կեանքում տեղի են ունեցել վերջին տարիներում: Նախ, որ դրանք արդէն ինքն իրան ինքեան նշանաւոր են, երկրորդ՝ դրանք դեռ մինչև

այսօր էլ բաւական թարմ են և այդու հանգե՞ր՝ դրանցից մի քանիսն իրանց հետեւանքներով՝ դեռ մինչև հիմա էլ չեն կորցրել իրանց ազդեցութիւնը մեր վրայ: Ահա հէնց դոյն անցքերից էլ մենք կսկսենք:

Ահա մէկ սովորական դործ, որ պարզորոշ կերպով արտայայտում է թիւրքահայ ժողովրդի անբաւականութիւնն իր դրութեամբ, դրութիւն, որ օրից օր դառնում է առաւել ու առաւել անտանելի: Այդ գործում, որպէս կայծակ, աչքի է զարնում այն փաստը, թէ ինչպէս հայ ճշուած ժողովուրդը, հայ արհեստաւոր դասն իր դրութիւնը թեթեւցնելու համար լիովին բնական կերպով ու տրամաբանօրէն թիւրք կառավարութեան դէմ դիմում է սպառնական միջոցներով՝ ապստամբութեամբ: Ընթերցողը երեւի գուշակում է, որ մեր խօսքը Կարինի գործի մասին է: Մենք չենք մտնիլ այդ գործի մանրամասնութիւնների մէջ, գործ, որով ապագայ տաղանդաւոր պատմաբանը կզարգարէ իր ամենազեղեցիկ էջերը, այլ մենք ուղղակի կդառնանք փաստերին:

Ութսուն հրեք թուականին Կարինում գոյութիւն ունէր մի գաղտնի ընկերութիւն, որի նպատակը, զուցէ ոչ այնքան պարզորոշ կերպով, կայանում էր նրանում, որ յեղափոխական, ապստամբական շարժումների միջոցով թիւրք կառավարութեան ճշուամենքին շարունակ զինուած ընդդիմադրութիւն ցոյց տալ: Այդ գաղտնի ընկերութեան անդամների թիւը հասնում էր մի քանի հարիւրի, և ուշագրութեան արժանի կէտն այն է, որ այդքանի մէջ երեք քառորդը արհեստաւոր դասի մարդիկ էին և հեւտաւար անուս մարդիկ, աղին ու քաջ սրտի տէր մարդիկ, ամբոխի մարդիկ, հարազատ զաւակներ ժողովրդի, ռամկի Գոյն հանգամանքը այդ արդէն ինքն ինքեան նշանաւոր գործի նշանաւոր կողմերից մէկն ենք համարում: Բաւական երկար ժամանակ այդ ընկերութիւնը գաղտնի կերպով աւելացնում էր իր անդամների թիւը, ամէն պատրաստութիւնների ձեռք զարնում և ըստ երևոյթին բոլորն աջող կերպով էր գնում: անդամները լի էին հաւատով և յոյսով իրենց արդար գործի արդողութեան վերաբերութեամբ և հէնց դոյն անհրաժեշտ յոյսն ու հաւատը յայտնուեցան նրանց համար այն շարժողը, որը և նրանց պատճառ եղաւ դիմելու դէպի այն պիսի հերոսական նախագծերի իրագործմանը:

Բայց աւա՛ղ, հեռու չէր այն թշուառ ժամը, երբ կառավարութիւնը պէտք է նկատէր նրանց հետքերը և դրանով այդ ընկերութեան առաջագիմութեանը վերջ տալ: Այդ ընկերութեան գոյութիւնը կառավարութիւնն իմացաւ շնորհով մի հայ քահանայի, որը նոյնպէս անդամ էր այդ ընկերութեան: Եւ այդպէս, մատնութեան միջոցով, կառավարութիւնը յարձակուեցաւ, ինչպէս սոված գաղան, ընկերութեան վրայ, հարիւրներով ձերբակալեց և առանց քննութեան, առանց դատաստանի նրանց

Դադեց բանտերում, արսորեց հեռաւոր վայրերն տեղեր, ուր մեռնողներ եղան և շատերը մինչև այսօր էլ կրում են իրենց վերջին օրերի տանջանքը:

Հարազատ Մասիսի մի կողմը կատարուած այդ տը խուր ողբերգութիւնը գեռ հազիւ էր աւարտել և գեռ հազիւ էր հայերի զրգուտած միտքը փոքր ինչ հանգար տուել, երբ Մասիսի միւս կողմը տեղի ունեցաւ մէկ այլ անցք, որի մէջ զլխաւոր դերը կատարում էր ոռւս կառավարութիւնը:

Զարապած ու վախեցած, որ հայերի մէջ ազգային ինքնաճանաչութիւնը սկսում է զարթնել և անկարող լի նեղով այդ երևոյթն արմատով լիապէս պոկել հայ երիւ տասարդութեան և ներկայ սերնդի միջից, մի քանի տա րի սորանից առաջ, ոռւս կառավարութիւնն առաջարկեց նախագիծ՝ փոխել հայուսուսնարանների կանոնադիրք եւ ներ կայացրեց իր ոռւսացնող ծրագիրը: Իր այդ միջոցով կա ռավարութիւնն ուզում էր հէնց հայ երեխաների սրտում սերմանել լիակատար խոնարհութիւն ապագայում ոռւս կառավարութեան առջև, ջնջել նրանց սէրը դէպի մայ րենի լեզուն ու իրանց ժողովուրդը և տալ նրանց այնպի սի կրթութիւն, որ այսօրուայ հայ երեխաներն ապա ղայում հանդիսանային իրրեւ արժանի պաշտօնեաներ, չի ու վն ի կն եր արժանի բիւրոկրատական ոռւս լէժիմիս կառավարութիւնն ուզում էր հէնց բողոքից ոռւսացնել հայերին և բոլոր հայկականը դնել սուսի վե րակացութեան տակ, զրկելով հայերի զարոցական գործն իր նախկին ինքնուրոյնութիւնից:

Ռուսաց նախագծի առաջարկութեան ժամանակն ըստ երևոյթին ընտրուած էր ամէնաաջող կերպով, այդ ժա մանակ իջմիածնի կաթուղիկոսական աթոռը թափուր էր Գէորդ կաթուղիկոսի մահուան պատճառով և հայերը պատրաստվում էին նոր հոգևոր գլուխ ընտրելու: Այդ ժամանակ կովկասեան փոխարքան Գօնդուկով Աօրսակովն էր, որ նշանաւոր է իր պահպանողականութեամբ և իր ոստտիկ ատելութեամբ դէպի հայերը: Այդուհանդերձ իջմիածնի սկսողը մերժեց ընդունել կառավարութեան ոռւսացնող ծրագիրը, պատճառ բերելով կաթուղիկոս չո շենալը, որը միակ իրր թէ իրաւունք ունէ այս կամ այն վերանորոգումն անել ազգային զարոցական գործում: Դրա հետ միասին բոլոր հայերի, սկսած ինտելիգէն տից մինչև մշակը, անբաւականութեան խուր տրտունջը սկզբները ոռւս կառավարութեան գցեց մէկ անհաճոյ ու ամաչկոտ դրութեան մէջ: Անշուշտ հայերից այդպիսի տրտունջ նա չէր սպասում: Բայց ոստիկանական կառա վարութեան ոստիկանական միջոցներն այդպիսի առիթ ներին չեն ուշանում երեան գալ և ահա մի գեղեցիկ օր ոստիկանութիւնն ու ժ ա ն գ ա ր մ ն եր ը թրերի ու դէնքերի շառաչումներով բանալով կողպում են հայ ու սուսնարանների դռները, մինչգեռ աշակերտուհիների և աշակերտների լացն ու կոծը բարձրանում էր, մինչգեռ

հայ ժողովրդին ընդհանուր զայրացում էր տիրել: Մի քանի օրից յետ ոռւս կառավարութեան դէմ հրատա րակուած զաղտնի չրջաբերականները չրջում էին ձեռքից ձեռք և հասնում մինչև Եւրոպա: Խօսք չկայ, որ ոռւսա հայ լրագրութիւնն անկարող էր բան ասելու, բայց թիււ քահայ լրագրութիւնը և մասամբ եւրոպական թերթերն առաջ էին բերում այդպիսի արտքի բոլոր ամօթը, որ պակտեցաւ ձերբակալութիւններով, և ուժով յարձակ վում էին բռնաւոր կառավարութեան վրայ: Այդպիսի կերպով հազարից աւելի ուսումնարաններ փակուած էին, երբ կաթուղիկոսական թափուր աթոռի վրայ բազ մեցաւ Մակարը, հին ու փոած հասկացողութիւնների մարդ և ոռւս կառավարութեան վախկոտ ու հուսառա րիմ ծառան: Եւ ահա դոյն Մակարը, որին ինտրիզների միջոցով յանձնուեցաւ կաթուղիկոսական ղեկավարող դաւ ազանը, յայտնուեցաւ հայ ուսումնարանների վերաբերու թեամբ զանազան ծուռ ու մութ ճանապարհներով ու խարէ ու թիւններով կառավարութեան պահանջների իրագործողը: Եւ նա բացեց հայոց փակուած զարոցները, սակայն աւ լանդ թողնելով անփոփոխ կառավարութեան առաջաւ կած ուսումնարանական ոռւսացնող ծրագիրը: Եւ դրա նով Մակարի ճակատին դրոշմուեցաւ մատնութեան աւ մօթը, որով նա հարստացրեց ոռւս կառավարութեանը նոյն ոռւսի բռնութեան ու անիշխանութեան մի նոր ու ժեղ փաստով: Իսկ իրենք հայերը, որ պակաս ամօթ չէ բերում, մնացին անխօս զոհեր իրենց երկու մեծագիւր ղեկավարների՝ հարազատ կաթուղիկոսի և բաշիբոս ղ ու կ ցարի:

Այդպիսով մեր կրթութեան գործը հանդիպում է ոռւս կառավարութեան կողմից անախորժ խաղերի, բայց աչք գցեցէք դէպի հարաւ, դէպի Մշտ կողմերն. այնտեղ բո լորովին տարբեր, սակայն կրկին աղետալ տեսարանի կհանդիպէք: Այդտեղ մարտադաշտ են դուրս եկած հա յերն ու թիւրքերը հողային հարցի նման մի նշանաւոր հարցի պատճառով:

Կառավարութիւնն ուզենալով հայ ժողովրդին կամաց կամաց զրկել իր բոլոր ոյժերից՝ տարօրինակ կերպով ու միջոցով առիթ եղաւ հողային հարցի բարձրանալուն: Գիտնալով որ հայի ամէնագլխաւոր ոյժը հողն է՝ կա ռավարութիւնը սկսաւ խլել հայերից հողերը և քիւրդեւ րին և դրա նման օտար ցեղերին հողատէր դարձնել: Այդպիսով թիւրքա-Հայաստանի հայ ժողովրդին մի մեծ վտանգ է սպառնում և արդարեւ այդպիսի վայրագ միջոցների սխտէմաբար գործադրութեան հետեւանքները ոչ ուչ կարող են կառավարութեանն իր նպատակին բոլո րովին մօտեցնել: Հիմա մէջ բերենք այստեղ դրա մէկ օ րինակը, որ մեզ տալիս է մի յայտնի թերթի Մշտ թղթակի ցը: «Գաղութանի բազմաթիւ զանազան գաղթականներին, ասում է թղթակիցը, տաճկաց կառավարութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեց հարկաւոր եղած ժամանակ

գործածելու իր նպատակների համար: Գոցա մէկ մասը տարածեց Հայաստանում, որոնք կ'առաւարտէ թեւան միջոցով հայոց հողերի վրայ բնակութիւն հաստատեցին: Այս ասելուց յետոյ նոյն թերթի թղթակիցը մեզ տալիս է հետեւեալ "սովորական" օրինակը. "Մայր դաշտի արեւելեան կողմում" ասում է նա, գտնվում է Գաղնիք սարը, պատմական Տարօն սարը, որի զառիվայրում գտնվում է մի հայ գիւղ Արտերտ անունով, ինչպէս տուն բնակչով, որոնք վայելում էին գեղեցիկ սարերի և հովիտների վայելչութիւնները: Տաճիկ կ'առաւարտէ թիւնը վնասակար համարեց այդպիսի մի գիւղ հայերի ձեռքում պահելը, ուստի մատնացոյց արեց չէ՛չէ՛ն երիւն գրաւելն ոյն գիւղի սեփական հովիտները: Գրանք Արտերտից ոչ այնքան հեռու բնակութիւն հաստատեցին և սկսեցին հայերի մարգագետինների խտտերը քաղել: Հայերը փորձեցին արգելելու, սակայն չէ՛ չէնները զինուած յարձակուեցան հայերի վրայ, որոնք պաշտպանվեցան իրանց պերանդիներով, մանգաղներով, բարերով և այլն, բայց չկարողացան դուրս հանել իրանց սահմաններից չէ՛չէններին:

"Խեղճ գիւղացին կը վարէր, կը սերմանէր, կը մշակէր, ապա իր գերանդին և մանգաղը կ'առնէր գնալու քաղելու, ստանալու իր գերդաստանի սնունդը, կեանքը: Սակայն թշուառին ներկայանում էր արիւնի գնով մշակած արտը բոլորովին մերկ, որովհետեւ չէ՛չէնները գիւղերը քաղում, տանում են: Գիւղացին այդտեղից կ'ուղևորվէր դէպի իր չայիրները հնձելու կամ բարդերը փոխադրելու գիւղ, բայց նրանց ևս չէր գտնում: Յանկարծ օրը ցերեկով խմորովին այլացեղերը գալիս գիւղի մօտից նախիրը բաժանելով քլում տանում:"

Կրճատներ այդ պատմութիւնը: Գիւղացիները գանգաւտով զիմում են կառավարութեան, նա ուշադրութիւն չէ դարձնում: Նրանց բողբոջ, նրանց իրաւունքի ձայնը մնում է "ձայն բարբառոյ յանապատի": Դիմում են գաւառապետին, գատաւորներին: Սրանք մեծ կաշառքներ են վերցնում, իբր թէ զործը կանոնաւորելու համար, այդպիսով կրկնապատիկ հարստահարում գիւղացուն և գործն էլ թողնում նոյն ապօրինի ու խառնափնդոր զբութեան մէջ: Վերջապէս գաւառապետը տեսնելով գիւղացիների ստիպողութեան խստութիւնը՝ պատասխանում է թէ՛ "Չէ՛չէնները պէտք է մնան նոյն հողի վրայ, բացի նրանցից մի ուրիշ խումբ ևս պէտք է ձեր կողմերը գալ բնակելու, դուք հող չառ ունէք": Զարահատած ու ստիպուած՝ գիւղացիները վճռում են իրենց տաւարներն ու շարժական կայքերը ժողովել ու քօշել, թողնելով օտարին տները, մշակած արտերը, կանաչազարդ դաշտերը և այլն: Ամբողջ մէկ օրուայ ճանապարհ դրանք անցած են լինում և հասած Յրոնք գիւղը, երբ կառավարութիւնն ուղարկում է դէպի նրանց կառավարչական ժո

ղովի մէկ անդամի, որը նրանց խօսք է տալիս կատարել իրենց օրինաւոր պահանջը և համոզում է նրանց վերադառնալ իրենց գիւղը, ինչպէս և լինում է... "Բայց ինչ է ներկայանում նոցա առաջ, սարսափած բացաւ կանչում է թղթակիցը. տները, արտերը, չայիրները, բոլորը աւերուած, բոլորը ոչնչացած... Խեղճերը նորից սկսում են ջլոտ բազուկները գործածել իրանց ապրուստի պիտոյքները հայթայթելու, նորից հարստութիւն գիւղելու պաշտօնեաների համար... նորից սկսել կառավարութեան ու պաշտօնեաների դռները մաշել՝ իրանց խոստացած գոհացումները կատարելու, բայց ի զուր..."

Այդ անցքի մէջ աչքի են խփում հայերի վերաբերութեամբ եղած ապօրինութեան ու բռնութեան երեք կերպերը. ա. կառավարութեան զրդուին ու գրգռումն այլ ազգիներին՝ տիրել հայերի հողերը հայերին ոչնչացնելու գիտաւորութեամբ և նրա ոչ միայն անուշադրութիւնն, այլ և ատելութիւնը դէպի հայի գանգատները. բ. հայ ժողովրդին հարստահարելու կառավարչական պաշտօնեաների միջոցները և գ. այլազգիների յարձակումները, հարստահարութիւններն ու բարբարոսութիւնները հայ ժողովրդի վերաբերութեամբ և այդ բոլորը սիստէմայի վերածած:

Ահա նմանօրինակ մէկ ուրիշ փաստ

Հէնց անցեալ տարի, գարնան մայիս ամսի վերջերը հոգեւոր գլուխ, մոլեռանդ քիւրդ հաջի Տայիրն իր հրոսակներով Մայ մօտ գտնուող Զրիկ հայ գիւղի տասնը հինգ արտը և հինգ բօստանը ոտնակոխ է անում, աւերում, անցնում է առաջ և արշաւում Ծալինայ հայ գիւղի արտերը փչացնում, ոչնչացնում դրանց, դարձեալ քսան արտ դոյն վիճակի մէջ է գցում, և յետոյ Առինչ վան և Խոփէր հայ գիւղերն էլ նոյնպէս կատաղութիւնների ու բարբարոսութիւնների զուէ է դարձնում: Գարձեալ գիւղացիները զիմում են կառավարութեան՝ Կառավարութիւնը ձեռն համար մի քանի բաներ է անում, բայց բոլորն իսկապէս, բնականաբար, ի վնաս հային և յայդպիսով գիւղացիները պարտավորվում են կամ վիղ ճըկել ու լռել և կամ դողթել: Որպէս առաջինն անտանելի է, նոյնպէս և երկրորդը՝ սպունիչ:

Խեղճ Հայաստան, ախր ինչո՞ւ համար են ամենայն կողմից քեզ այդչափ պատառ-պատառ անում... Ահա վանը, որի վրայ են յառած հայրենասէրների աչքերը, վանը, աշխարհի այդ գեղեցիկ անկիւնը, որի վրայ հայերից ոչ քիչերը նայում են իրրեւ լու ապագայ ունեցող մի վայր... Բայց ներս մտէք և տեսէք թէ ինչեր են անցնում այդտեղ:

Գեւ չատերն են յիշում այն անցքը, որ տեղի ունեցաւ վանում ութսուն և վեց թ. քսան և երկու յունիսին: Ամէնքին յայտնի է, որ այդ անցքի պատճառն էր վանի առաջնորդի ընտրողութիւնը: Չեր առջեւ կանգնած է Պօղոս սրբազանը, այդ ըթամիտ ծերունին, մի տպէտ,

որին յանձնել էին վանի առաջնորդական տեղապահի պաշտօնը։ Այդ խտտասիրտ ու ազգամիտ անձն, անխիղճ եկեղեցական այբը, շնորհով աջակցութեան ցարութիւն պատրիարքի, ազգեցութիւն ունեցող հայ ինտորի գանտն երիւթիւրք կառավարութեան, այգալիսի նախանձելի գաշակցութեան, ընտրողութեան գործում, առաջացրեց և իր անունը, իբրև կանգնող առաջնորդական պաշտօնի և կարողացաւ վանի հայերին կուսակցութիւնների բաժանել։ Տեսնել Պօղոսին առաջնորդ վանի թիւրք կառավարութեան մեծ ցանկութիւնն էր և այն պատճառով, որ այդ կղերականն ամէն բայէ պատրաստ էր լըել ոտը ամէնայեւթիւն թիւրք պաշտօնեայի։ Այգալիսով վանի պէս մի նշանաւոր տեղում Պօղոս սըրբազանն իբրև կառավարիչ անձ կառավարութեան համար ներկայանում էր ինչպէս ամէնայարմար ու ամէնալաւ ղէնք հայերի ղէմ։ Աւելի քան հարկաւոր էր հաճելի, անձնուէր երեսաւը համար և աշխատելով ծառայել սուլթանին, Ֆարութիւն պատրիարքն էլ Պօղոսի ընտրութեան պաշտպան էր, չնայած որ կառավարութիւնը ոչ մի բարոյական ու իրաւարանական իրաւունք չունէր խտնուելու հայերի լիովին կրօնական ու ազգային այդ գործի մէջ։ Բայց այնտեղ, որ անխիտանութիւնն է թաղաւորում իրաւունքի մասին չէ կարելի խօսել։ Ամէն բան կարգադրուած էր Պօղոսի ընտրութեան օգտին և նոյն ինքն այդ կղերականը ներկայ էր քուէարկութեանը, պաշտպան ունենալով թիւրք ոստիկանութիւնը, որը թոյլ էր տալիս քուէարկելու միայն նրանց, որոնք Պօղոսի կողմն էին։ Նախ այդ տեղը արարողութիւնն աճող էր գնում, բայց յանկարծ բոլորն իր կերպարանքը փոխեց։ Հարկունքով քաղաքացիներ, որոնք սիրում էին իրենց ազգը և առում խնորհիւններն ու անարգարութիւնը, քաղաքի բոլոր կողմերում, ուր կատարվում էր քուէարկութիւն, գարմանալի համարձակութեամբ գլորում, կոտորատում են քուէատուիները, բանալիով փակում եկեղեցիները, ամէնայն տեսակ ընդդիմադրութիւն ցոյց տալիս ընտրութեանը։ Կատաղած ամբոխը բզատում էր թէ՛ չէնք ուղում Պօղոսին։ Ըփոթն ու յուզումը տիրել էր չորս կողմ։ Եւ այդպիսով ոչնչանում է քուէարկութիւնը, ըստ որում նոյն իրեն Պօղոսի հրամանով, որ նախադաշում էր Արարք եկեղեցու գաւթում, թիւրք ղինուորները սուլաներով յարձակվում են զայրացած ամբոխի վրայ։ սա իր կողմից սկսում է պաշտպանուել քարերով, փայտերով և այլն... Հայ արիւնն էլ հոսեցաւ, բայց Պօղոսն այդուհետեւ էլ ընտրուել չէր կարող և յաղթանակն արգարների կողմն էր։ Չերբակալութիւններն ու աքսորը պատկեցին ժողովրդի յանդուգն ու գեղեցիկ ընդդիմադրութիւնը։

Ֆարութիւն պատրիարքը, որ արդէն դոյն գործում լաւ ապացուցեց թէ՛ ինքն ինչ գոյնի տէր մարդ է, այս տարի ամառը մէկ ուրիշ գործում աւելի ամբայրեց այն

տխուր տպաւորութիւնը, որ նա իր պատրիարքութեան օրով թողել էր ազգիս վրայ։

Դեռ ամէնքի յիշողութեան մէջ թարմ է այն անցքը, որ բոլորովին զուրկ չէ յայտնի ծանրակշիւթիւնից, անցք, որ իր ժամանակին ոչ պակաս ազմուկ հանեց և ոչ պակաս վրդովեց շատերին։ Մեր խօսքը՝ Պօղոս Պէշիկթաշի գերեզմանատան գործի մասին է։ Այդ գործի վրայ մինք չենք նայիլ այն տեսակէտից թէ՛ քրիստոնէական գերեզմանատանը սպառնում էր մահմէդական սուլթանի սքոսա տեղիի կերպարանք ստանալու վտանգը, ըստ որում մեռած քրիստոնեաների ոսկրները պէտք է հանուէին իրենց տեղերից։ Դրանց մէջ մենք ոչինչ նշանաւոր բան չենք տեսնում։ Եթէ պալատի ղիմացը գտնուող գերեզմանատան տեսքը ծակում էր նախապաշարուններով լի սուլթանի աչքը և անախորժ տաղտուութեան պատճառ էր լինում այդ մահմէտականի վրայ և այդ պատճառով խեղճի ցանկութիւնն է եղել գերեզմանատանը փոխարինել ստուերաշուք ծառուղիներով թող այդպէս լինի։ Դրա վրայ մենք կարող ենք նայել սառնարին կերպով։ Բայց բանը նրանումն է, որ այդ, ըստ երեւոյթին անսկզբ, մինչև անգամ անմիտ ցանկութեան տակ մենք տեսնում ենք թագնուած թիւրք կառավարութեան խորամանկութիւնից, խարդախութիւնից ոչ զուրկ ղիտաւորութիւնը, որ նա ուղղել էր հայերի ղէմ։ Մենք այդ ցանկութեան տակ թագնուած ենք տեսնում այն կանոնաւոր ճշնշուններն, այն մշտական հարուածներն ու բռնութիւնը, որ կառավարութիւնը գործածում է հայերի ղէմ։ Նրա նպատակն էր՝ ստորացնել հայերի ազգային պատուածու նաշութիւնը, հազարներով հասցրած վիրաւորանքներից յետոյ դարձեալ հասցնել նոր խիստ վիրաւորանք հայերի արդէն վիրաւորուած ազգային անձնասիրութեանը, նորից փորձել նրանց ստրկական խոնարհութիւնը, ղիպ չիլ նրանց կրօնին, որը հայ ազգի պաշտպաններից մէկն է հանդիսանում և այդպիսով վատարակել նոր ոյժ, նոր իրաւունք հայերի ղէմ։ Բայց աւանդ, դեռ հասկանալի է, եթէ մեր թշնամին է այդպէս վարվում, սակայն մի խումբ հայեր, այսպէս անուանուած՝ պօլսական գործիչներ, ուրոնց անունն է՝ ոչնչութիւն ու ամօթ, այն բարձրաստիճան անձեր-հայերը, որոնք Աղգային Ժողովում թղթէ սուր են խաղացնում և փոշիով աչք կուրացնում, մինչդեռ միևնոյն ժամանակ իրենց անձնականի համար հէնց մեր ղէմ գաղտնի կերպով ինտրիգների որոգայթներ լուրում, ահա այդ մարդիկն, այդ հայ անուն կողմները և դրանց հետ միասին Ֆարութիւն պատրիարքը, Պէշիկթաշի տխուր գործում կազմում էին կառավարութեան գործադրող աջ ձեռքը նրա հայաստեաց ղիտաւորութիւնների իրագործման օգտին։ Բայց շնորհով խրիմեան Հայրիկի և իր համակարծիքների ուժեղ ընդդիմադրութեան՝ կառավարութեան ղիտաւորութիւնը փայլեցաւ լիակաւ տար անաշղոքութեամբ։ Հայերի բարկութիւնն ու յուզումն

այդ ժամանակ մեծ էր և ոչ սակաւ անձեր ենթարկուեցան կառավարութեան կասկածի:

Այս թէ ո՛ր է հասնում թիւրք կառավարութեան յանդգնութիւնը, չորհով այն ողբալի հանգամանքին, որ մենք միշտ սովոր ենք խոնարհել նրա առջև, ինչպէս հլու հսկատակ: Ո՛չ, թիւրք կառավարութեան վերաբերութեամբ մենք պէտք է լինենք «ակն ընդ ական և ատաւըն ընդ ատաման»:

Մինչդեռ ճշուում են մեզ Ռուսաստանում, մինչդեռ բռնաւոր ձեռքը մեզ խեղդում է մեր հայրենիքում և թիւրքիայում, մի և նոյն ժամանակ պարսկական խաների ձեռքից էլ մենք ողջ առողջ ենք պրծնում: Պատառւած երեք կողմի, մենք առաւել կամ պակաս զոհ ենք երեք հիւանդութեան, որ միասին դառնում են մի կորստաբեր, սպանիչ ախտ: Այդ ախտը միշտ հայի գլխին կախուած սուրն է, ոչ մի տեղ հային չթողնող փմէն տեղ հային հալածող, հային ջնջող բռնութիւնն է:

Ո՛չ է յիշում այս զարնան Պարսկաստանում, Վարազդի հայ գիւղերի գլխին եկած սոսկալի աղէտը, երբ սկսած հայ գիւղացու խրճիթից մինչև նրա վերջին գործէքը, սկսած հայ ծերուկից մինչև հայ մանուկը՝ պարսիկ վայրենի խաների կողպուտի, սրի, կոտորման ճարակ էին դարձել: Կողպուտը, հալածումն ու սպանութիւնը ձեռք ձեռքի տուած, աղէխարը մահու նշանաբանով, թէ դատի վրայ, թէ խրճիթում ընկած էին հայ գիւղացու, հայ գեղջիկուհու ետևից և չորս կողմ դատարկացնում, բախում էին ամէն բան... Այդ անցքի բոլոր սարսափներն իր ժամանակին հանդէս էին բերվում հայ լրագրութեան մէջ և մենք սուրբորէ ենք համարում երկար խօսել զրա մասին: Միայն կաւելացնենք, որ ճարա հատուած, անտուն, անտեղ, գիւղացիներն ամբոխներով դիմեցին Դարեժի առաջնորդարանն՝ օգնութիւն խնդրելով: առաջնորդի և ուրիշ ազգեցիկ հայերի միջոցով պարսիկ կառավարութիւնը վերջ տուեց այդ աղէտին և վերադարձրեց հայերին նրանց կողպատուած ինչքերը: Հայերը նորից մտան իրանց գիւղերը, բայց աւաղ, զրանց տեսքը շատ էր փոխուել: Յանցաւորները ստացան իրենց պատիժը և գրանով վերջ կղաւ այդ գործին:

Վերջ գնենք մեր փաստերին հետեւալ աղէտալի լուրով, որ մէկ երկու ամիս առաջ գուժեց կրկին թիւրքա-Հայաստանից, որ թիւրքի շնորհով դարձել է աղբիւրը հայի ցուերի, հայի գոթախտութեան, հայի մահու:

Զէյթուն, փառաւոր անուն, որ սղգային անկախութեան նշանաբան է դարձել: Այժմ կայ Հայաստանում մէկ անկիւն, ուր հայերը նախնիքներից ժառանգած մինչև այսօր պահած են իրենց աղգային հպարտութիւնն, իրենց առաւել կամ պակաս ազատ կացութիւնն, իրենց եղբայրական սէրն ու սիրտ կապը գէպի միմեանց, իրենց հայրենասիրութիւնը, քաջութիւնն, ուղղամտութիւնն ու պարզութիւնը և այդ բոլորն արեան գնով, դա՛ Զէյթունն և իր

որդիքն են: Իրենց նահապետական լավկապետական կազմակերպութեամբ նրանք զրեթէ անխախտելի մնացել են հին ժամանակներից մինչև այժմ: Կղզիացած իրենց գեղանկար ու խորհրդաւոր լեռնալայրերում, նրանք իրենց ցից ներկայացնում են լեռնցիների անդուտ ու անվախ գնդի պատկեր, որ նախամեծար է համարում մեռնել սրբի հարուածից, քան լինել օտարին ծառայ: Այսօր այս դարու սկզբից գէյթունցիներն իրենց անկախութեան համար քաջութեամբ գործեցին մի փայլուն շարք ապստամբական շարժումներ որպէս թիւրք կառավարութեան ճշումների դէմ, նմանապէս այն այլացեղերի դէմ, որոնք սպառնացել էին խախտել գէյթունցիների հանդիստն ու բարեկեցութիւնը: Եւ ո՛վ կարող էր կարծել, որ այդ հը պարտ ու քաջ հայ լեռնցիներն այսօր իրենց տներն, իրենց սիրած քաղաքը կորցրած՝ Կիլիկիայի գալտերի վերայ օրուայ հացի կարօտ թշուառներ են դարձել: Կրտս պատճառն է հրդեհը: Հազար տուն, երկու հարիւր եօթնասուն խանութ իրենց ապրանքներով, հինգ վարժարան, չորս մեծ եկեղեցի բոլորովին մոխիր են դարձել լաւտղ բողբոջից և այդ ամէնը կատարուել է մի քանի ժամում: Երկուսի քսան և վեցի գիւղերը ժամը չորսից մինչև առաւօտեան ժամը մէկ ու կէսը: Թշուառ հրկիզեալները մօտ ինն հարիւր ընտանիք ցրուած են մօտակայ այգեստաններում, ինչպէս անհովիւ ոչխարներ, դառն ու ողբալի գրութեան մէջ, քաղցած ու մերկ: Հրդեհի պատճառի մասին թիւրք կառավարութիւնը կարող է ամէն տեսակ բաներ հնարել, բայց այդ ջանքերը չեն կարող փառաւոր կառավարութեան վրայ ծանրացող հայերի կասկածը: ձիւտ է, որ կարող է հրդեհն անակնկալ ու պատահական կերպով ծագել բնիկ Ապստանցի թիւրքի տանից, որ դատարանի զրազիր է, բայց այդպիսի անակնկալութեանն ու պատահականութեանը դժուար է հաւատալ, երբ մարդ գործ ունի այն կառավարութեան հետ, որի ձեռքի տակ գտնուած հայաբնակ վայրերում հրդեհը մշտական սխտէմական երեղոյթ է:

Ամէն կողմեր հայերը բացել են հանգանակութիւն յօգուտ Զէյթունի հրկիզեալներին և մինչև այժմ էլ շարունակվում է աջոգութեամբ: Բայց դժբախտաբար, զէյթունցիների ներկայ սոսկալի թշուառութիւններին հաղիւթ է բաւականութիւն տալ լոկ այդ միջոցը:

Այսպէս, անխուսափելի կերպով երկիրը հասնում է մինչյարատե խրոնիկական զայրոյթի տիրապետող բռնաւոր կառավարութեան դէմ: Իր գրութեան շնորհով ժողովուրդը վերջնականապէս զրկվում է բոլոր կարելիութիւնից հանգստութեամբ, սրտով ու խղճմտանքով կատարել իր պարտականութիւնները, հետեւել իր բնական ձգտումներին, ծառայել իր շահերին և ունենալ կեանքի կանոնաւոր ու առողջ ընթացք: Անբաւականութեան հանգոյցն առելի և առելի է խճճվում, ձգվում ու պնդանում և առաւել ըս-

տէս է մարդուն հալածում այն միտքը թէ՛ պէտք է կրօ-
րել պէտք է պատահել այդ հանգույցը . . . Հէնց իրողու-
թիւններից մենք տեսնում ենք թէ՛ ինչպէս նոյն ինքը ժո-
ղովուրդը բոլորովին բնական կերպով ընտրում է այդ
հանգույցը կտրելու իսկական ձեւը, իր փրկութեան իսկա-
կան միջոցն ու ճանապարհը: Այդ միջոցն, այդ ճանա-
պարհը ժողովուրդը տեսնում է, թերեւս հէնց լոկ բնաղ-
ղումով, յանդուգն սպառնալիքների մէջ կառավարութեան
դէմ: Եթէ վերոյիշեալ մի քանի իրողութիւնների, ժողո-
վրդային յուզումների ժամանակ նոյն ինքը ժողովուրդը
կրթութեամբ դասից ունենար ճշմարիտ ու անկեղծ բարե-
կամներ, որոնք նրան կարող կը լինէին ցայց տալ թէ՛
ինչ և ո՞րպէս պէտք է անել այն ժամանակ, հարկաւ, և
կասկած չկայ, որ աչքի ընկնող ժողովրդային յուզումնե-
րի հետեւանքները չէին լինիլ այնպէս անորոշ ու ողոր-
մելի: Մարտափնի է մտածել ժողովրդի այդպիսի դրու-
թեան հետեւանքների մասին, երբ կուլիտ, վայրենի ան-
իշխանութիւնն ու բռնութիւնը ժողովրդին բերել են մին-
չեւ անվերջանալի տանջանքների և երբ այդ տանջանքները
հասնում են իրենց վերջնականին, ժողովուրդը կամ յու-
ստահատուած ու գլուխը կորցնելով դիմում է օտար եւ-
հիւններ բազմ որոնելու և կամ նոյն իսկ իր հայրե-
նիքում գրկվում իր բոլոր հոգեկան ու ֆիզիկական
կարողութիւններից, հալվում, ոչնչանում: Արդեօք հասե՞լ
է այդպիսի ցածրութեան որ և է ժողովուրդը: Արդեօք
կրե՞լ է այդպիսի ճնշում, հալածում, չարչարանք որ և է
ժողովուրդը: Օ՛, եղբայրներ, միթէ մեր մէջ իսպառ ան-
հետացել է մինչեւ իսկ աղքատի սպառնալուծութեան,
աղքատի արժանաւորութեան զգացումը: Հայը հանգիստ
չէ տալիս թիւրք կառավարութեան, հայը նրա համար
յայտնվում է կենդանի ու սպառնացող ապացոյց նրա
ամենօրեայ մեղքերի ու ամօթի. հայը թիւրքին ներկայ-
անում է որպէս պատճառ նրա ապաղայ անկման, որպէս
մահու հրեշտակ նրա մահուան անկողնու գլխին կանդնած:
Եւ ահա թիւրքը հէնց որ նկատում է հայերի մէջ ամէ-
նափոքր արտայայտութիւն աղքատի ինքնաճանաչութեան,
որ և է ամենափոքր շարժում, որ երբեմն անվնաս է
բոլորովին, իսկոյն տալիս է դրան նշանաւոր բնաւորու-
թիւն և բոլորովին անմեղ զոհերին ամբոխներով ձերբա-
կալում, արքորում: Թիւրք կառավարութիւնն առանց ու-
շաղրութեան է թողնում հայ ժողովրդին և նրա շահերը,
այլ և ընդհակառակը՝ նա ամենախիստ միջոցներով հայի
գլխին գործադրում է սիստէմական ցածրութիւններ,
կողոպուտներ, գաղանթութիւններ . . . և չէ՞ որ բռնաւոր
կառավարութեան սկզբունքներն են դրանք: Բայց, հա-
կառակ կառավարութեան բոլոր գործողութիւններին,
գոգոհութիւնը հայերի մէջ ընդունում է աւելի և աւելի
սպառնացող կերպարանք և ժողովրդային ընդհանրու-
թեան մէջ առաւել ու առաւել է սկսում երևան գալ այն
գիտակցութիւնը, որ թիւրքը նրա սեփական արժանաւո-

րութիւնը ստորացնում է, որ թիւրքը նրա արինախում
թշնամին է: Դրանց շնորհով էլ Հայաստանի այս կամ
այն մասում, այս կամ այն պատճառով սկսում է յայտ-
նուել ապստամբական ոգի, տրամադրութիւն: Բայց վա՛յ
թիւրք կառավարութեան այն ժամին, երբ ժողովրդի ան-
բաւականութեան այդ խուլ ու դեռ զոգոյծուն արտուն-
ջը, այդ առանձին յուզումները, առանձին շարժումները
կզանան ընդհանուր, երբ հանդամանքները և հայ երի-
տասարդութեան մէջ երևան եկող յեղափոխական տա-
րը ժողովրդին կդնեն սրղ հողի վրայ՝ յեղափոխական ու-
րոշ ծրագրով, որն ընդունակ կլինի ժողովրդի մէջ յայտ-
նուող յուզումներն ու շարժումները ձուլել միատեղ,
զարմեղ ընդհանուր, օ՛, այդ ժամին ժողովրդի խուլ ու
երկչոտ տրտունջը կզանայ որոտների հարիւրաձայն դը-
ղրոց, այդ ժամը կլինի ժամ բռնութեան ոչնչութեան
ու անգորութեանը և լուսաւոր վերածնութեանը տանջա-
լի ժողովրդի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՒՐԻՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Որպէս ամէնմի բռնապետական կառավարութիւն,
թիւրքիւն էլ զողալով իր մորթի համար, չէ բաւակա-
նանում այն մշտական անդուստի գաղանային ճնշումներով,
բռնութիւններով, որ հայ ժողովրդի վրան է գործադրում:
Ամէնմի հային, որը փոքր իշատէ հայի դոյն է կրում, կա-
ռավարութիւնը խուզարկութեան է ենթարկում, չլիա-
յում է իր բանտերում, վատառողջ կլիմա ունեցող տե-
ղեր արքորում քաղաքական յանցաւոր նրան ճանաչելով,
թէկուղ այդ բանտարկուածը, այդ արքորուածը մեղք
էլ գործած չլինի թիւրքի դէմ: Բայց այդ բոլոր
նահատակների, անմեղ զոհերի վրէժը թիւրքն ինքն
իր ձեռքով է պատրաստում իրեն համար և կգայ օրը,
երբ այդ վրէժի պահանջը չատ թանկ կնստէ թիւրքին:
Այստեղ մենք մէջ ենք բերում, օգտուելով հայ պարբե-
րական թերթերից, այն քաղաքական ձեռքակալութիւն
ները, բանտարկութիւնները, արքորները, որ թիւրք կա-
ռավարութիւնն այս երկու յերթ վերջին տարիներում կա-
տարեց հայերի մէջ:

ՌԵՍՈՆ և հինգ թ.

Հոկտեմբերին Մկրտիչ Ալֆիլեան գատապարտուեցաւ
երեք տարի բանտարկութեան:

Նոյեմբերին վանում բանտարկուեցան Պալուջեան,
վարժապետեան, Թովմաս Կեոպեան և Յովհաննէս Շիր-
վանեան:

Իբր քաղաքական յանցանքով Մշոյ առաջնորդ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Ալէաթճեան մի քանի տարի առաջ բերուեցաւ Կ. Պօլիս և ութսուն և հինգ թ. միայն թոյլտուութիւն ստացաւ վերադառնալ Մուշ իր նախկին պաշտօնով:

Անանը վանում ձերբակալուեցաւ փաստարան Սա. հակ Վալճեան, բերուեցաւ Կ. Պօլիս և բանտարկուեցաւ այդտեղ:

Ութսուն և վեց թ.

Յունուարին վանում բանտարկուեցան մի խումբ երիտասարդներ:

Սուրբիլին կրկին անգամ ձերբակալուեցաւ ու բանտարկուեցաւ փոքր ինչ առաջ բանտից արձակուած՝ ուսուցիչ Բաշքալէում Աբգար Խաղաղորդեան:

Իբր քաղաքական յանցանքով Արաբկիրի առաջնորդ Գեր. Լեւոնիկ եպիսկոպոս Ապահոյնի մի քանի տարի առաջ բերուեցաւ Կ. Պօլիս և ութսուն և վեց թ. զարնանը միայն թոյլտուութիւն ստացաւ վերադառնալ Արաբկիր իր նախկին պաշտօնով:

Բաղարիայից գալով Կ. Պօլիս գարնանը ձերբակալուեցաւ Օննիկ անունով մի հայ, որն իբր ունէր հետք յեղափոխական թղթեր:

Վանում ձերբակալուեցաւ աշխարհագրական քարտէշների համար ուսուցիչ Մկրտիչ Թէրլէմէզեան, յետոյ արձակուեցաւ վանի քսան և երկու յունիսի յուզումներից յետոյ իր բացակայութեամբ՝ նրան մեղաւոր ճանաչեցին այդ անցքում և երբ սուլթան Համիդի գահակալութեան տարեդարձի առիթով նա սուլթանի ներումը ըստացաւ՝ եկաւ Կ. Պօլիս: Այդտեղ նրան վերստին ձերբակալեցին ու բանտարկեցին:

Վանի քսան և երկու յունիսի մեծ յուզումների պատճառով կատարուեցան հետեւալ ձերբակալութիւնները.

Բանտարկուեցան Գալճեան, Փէհրեզեան և Կարապետ Ժամակոչեան: Այս վերջինի մայրը որդու բանտարկութեան պատճառով վախճանուեցաւ, ըստ որում բանտարկուածին կատարութիւնը թոյլ չտուեց տալ մահամերձ մօրն իր յետին որդիական համբոյրը:

Երեսուն և եօթ հոգի բանտարկուածներից քսան և վեցին արձակեցին. մնացածները դատաւարտուեցան և բերից մինչև տասն և հինգ տարի բանտարկութեան: Մօտ տասն փախստական հայեր դատաւարտուած են ցմահ բանտարկութեան, եթէ կառավարութեան ձեռքն ընկնեն: Աւետ. Թէրլէմէզեան և Խաչ. Ասլանեան բանտարկուեցան մի քանի ժամանակով, մինչև որ դրանց որդիներին կարողացան ձերբակալել և դրանից յետոյ արձակեցին հայրերին: Կար. Նաթանեան կանչուեցաւ Պօլիս ուր և ձերբակալուեցաւ: Յետոյ աքսորուեցաւ Կարին և միայն բաւական ժամանակից յետոյ իրաւունք ստացաւ վերադառնալ վան:

Հոկտեմբերին վանում բանտարկուեցաւ Աւետիս Պարթեան և մի չարաթից յետոյ երաշխաւորութեամբ արձակուեցաւ: Նոյն ժամանակներն էլ ձերբակալուեցաւ այնտեղ ոմն Մարգար Նոյեմբերին Պօլսում բանտարկուեցաւ Գար. Բաղդեցեան և Մարգար Բժիշկեան:

Դեկտեմբերին՝ զադունի ոստիկանութեան խուզարկութիւն Կարինի առաջնորդարանում:

Նոյն ամսին ձերբակալուեցան Միսցեայ-Բնկերութեանց Հայաստանի վարժարանների ընդհանուր տեսուչ Մկրտիչ Սարգեան և փոխտեսուչ Մարկ. Նաթանեան, որ կառկածում էին իբր կառավարութեան դէմ գրուած միքունի գրութիւնների հեղինակներ: Նոյն ամսին վանում ձերբակալուեցան կիրակնօրեայ վարժարանի աշակերտներ՝ Պետ. Շատաղցեան, Պօղոս Խոնտիկեան, Մկր. Մեքրոնեան, Արիս. Ախիկեան, Յով. Փանքանեան, Գր. Պէօղլեկեան, Ռուր. Շատուրեան, Նշան Օղեան և Մէք. Նաթանեան: Գ. Պէօղլեկեան և Շատուրեան անմեղ ճանաչուելով ազատուեցան: Մ. Ախիկեան իր հասակի փոքրութեան պատճառով նոյնպէս ազատուեցաւ: Պ. Շատաղցեան, Պ. Խոնտիկեան և Մ. Մեքրոնեան իբր ապստամբ դատաւարտուեցան երեք ամիս բանտարկութեան: Ն. Օղեան, Յ. Փանքանեան և Մ. Նաթանեան աքսորուեցան Գօնիս:

Կարունակուէ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Անկարող լինելով նշանակել «Հնչակի» լոյս տեսնելու ժամանակները, մենք կաշխատենք հրատարակել ամիսը մէկ անգամ չարաթաթերթի դիքքով, մի, երբեմն երկու տպագրական թերթից բաղկացած: Նրա կանոնաւոր հրատարակութիւնը կարուած կլինի հանգամանքների բարեկաջողութիւնից և նոյն իսկ հասարակութեան համակրութիւնից ու աջակցութիւնից: Զգուշացնում ենք Հայաստանի, Կովկասի, Թիւրքիայի և ուրիշ տեղերի մեր ապագայ թղթակիցներին, որ ժողովրդական զործի հետ ուղղակի կամ անուղղակի կապ չունեցող յօդուածները չեն տպագրուիլ: Միևնոյն ժամանակ խնդրում ենք թղթակցութիւնները միայն գամայն փաստերի կարճ ու ամիսի նկարագրութիւններով հարուստ լինեն: Կընդունուեն երբեմն և այնպիսի վիճական ու բանաստեղծական զրուածներ, որոնք համապատասխանում են «Հնչակի» ուղղութեան:

«Հնչակի» գինն է յիսուս տասնութ կամ քսան կօպ. Կարելի է ուղարկել փօստային մարկանքով:

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւալ հասցէներով.

MONTPELLIER (France) : M. Bénéard, (n° 25) Poste restante.
GENÈVE : Librairie Gauchat et Robert (N° 205).

Իսկ գրամ ուղարկել.

BALE (Suisse) : Mr Daniel. Poste restante.

Լօնդօն. Հայկական ազատ տպարան: